

Ն Ե Ր Դ Ր ՈՒ Մ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՐՄԵՆ ՏԵՐ-ՏԱՃԱՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

Հայաստանում բնակելի և առևտրային (կոմերցիոն) ենթակառուցվածքներն ստեղծվել են խորհրդային տարիներին և չեն համապատասխանում ներկայիս պահանջներին և միջազգային ստանդարտներին: Ժամանակի ընթացքում ստեղծվում են նորերը՝ նոր ստանդարտներին և պահանջներին համապատասխան:

Նման վիճակ է ստեղծվել նաև ՏՏ ոլորտում, որը ձևավորվել է 1999-2000 թվականներին: Հիմնականում ներգրավված ընկերություններն աշխատում են ամերիկյան և եվրոպական պատվիրատուների համար և պետք է ապահովեն միջազգային ստանդարտներ, այդ թվում՝ ֆիզիկական ենթակառուցվածքների նկատմամբ պահանջներ: Այդպիսիք Հայաստանում ուղղակի չկան: Հայկական ՏՏ ոլորտի ընկերությունները տեղակայված են խորհրդային տարիներին կառուցված շենքերում, որոնք ենթարկվել են որոշ ներքին փոփոխությունների, բայց դրանք չեն ապահովում որևէ պայման և ստանդարտ: ՏՏ ոլորտի ընկերությունները, որպես կանոն, չունեն սեփական շենքեր, նրանք հիմնականում դրանք վարձակալում են:

Ֆիզիկական ենթակառուցվածքների առկայությունը Հայաստանում դարձել է ՏՏ սեկտորի առաջխաղացման հիմնական նախապայմաններից մեկը:

Ներդրումային ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2.502714 հա (25027,14 քառ.մ) ընդհանուր մակերես ունեցող հողամասում, որից՝

- սեփականության իրավունքով հողամասի մակերես՝ 0.82 հա (8200 քառ.մ),

- Ծիծեռնակաբերդի խճուղուց դեպի շենք մոտեցումն ապահովելու համար լրացուցիչ անհրաժեշտ կառուցապատման իրավունքով հողամասի մակերեսը՝ 0.2605 հա (2605 քառ.մ), և 0.112823 հա (1128,23 քառ.մ) սեփականության իրավունքով,

- կառուցապատման, կանաչապատման և բարեկարգման համար լրացուցիչ սեփականության իրավունքով անհրաժեշտ հողամասի մակերեսը՝ 1.309391 հա (13093,91 քառ.մ):

Կառուցվող շինության ընդհանուր մակերեսը կազմում է՝ 152725 քառ.մ:

Շինության օգտակար մակերեսը կազմում է՝ 144516 քառ.մ, որը բաղկացած է՝

- Ընդհանուր օգտագործման տարածքներ՝ 31850 քառ.մ, որոնք ենթակա են պարտադիր վերջնական հարդարման, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 22.2%, որից՝

- Ճանապարհ, բաց կայանատեղ՝ 2777 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 1.9%:

- Հետիոտնային անցումներ, մայթեր՝ 9080 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 6.3%:

- Կանաչ տարածքներ՝ 7055 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 5.2% (ընդհանուր հողի մակերեսի 40.0%):

- Աստիճաններ, վերելակային սրահներ՝ 7363 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 5.0%:

- Նախասարահներ, միջանցքներ՝ 5575 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 3.8%:

- Կոմերցիոն տարածքներ՝ 24809 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 17.5% որից՝

- Սպորտային՝ 6056 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 4.3%:

- Կոնֆերանս կենտրոն՝ 4700 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 3.3%:

- Առևտրային՝ 11203 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 7.8%:

- Գիտակրթական կենտրոն՝ 2850 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 2.1%:

- Օֆիսային տարածքներ՝ 38690 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 26.7% (նախատեսված 2600 աշխատողի համար):

- Տեխնիկական տարածքներ՝ 6014 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 4.4%:

- Ավտոկայանատեղ՝ 42560 քառ.մ, որը կազմում է ընդհանուր շինության մակերեսի 29.2%:

Ներդրումների մոտավոր արժեքը՝ 130 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ առանց ԱԱՀ:

Շինարարական աշխատանքները կավարտվեն շինարարության թույլտվության տրամադրման պահից 48-54 ամսվա ընթացքում:

Ծրագրի իրականացման համար պետք է հիմնադրվի «Դալան Թեքնոլոջիս» փակ բաժնետիրական ընկերությունը: Ընկերությունում՝ որպես կանոնադրական կապիտալի համալրում, կներդրվի սեփականության իրավունքով պատկանող 0.82 հա (8200 քառ.մ) հողամասը և Երևանի համայնքից ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերված 1.422214 հա (14222.14 քառ.մ) հողամասը և 0.2605 հա (2605.0 քառ.մ) հողատարածքի կառուցապատման իրավունքը:

Ընկերությունը Երևան համայնքին կնվիրի 300 քառ.մ աշխատանքային (գրասենյակային) տարածք՝ ՏՏ ոլորտի Երևանի քաղաքային ծրագրերին օժանդակելու նպատակով:

Ծրագրի իրականացմանն անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման համար կթողարկվեն լրացուցիչ բաժնետոմսեր և կներգրավվեն վարկային միջոցներ:

Ծրագրի իրականացման արդյունքում կկառուցվի BOMA-ի A-class շենք և ենթակառուցվածք՝ 2600 աշխատատեղի համար:


Ծրագրի իրականացման նախապատրաստական փուլում ստեղծվելու է 20 աշխատատեղ, շինարարության իրականացման փուլում՝ 400 աշխատատեղ, իսկ գործարկումից հետո՝ 300 աշխատատեղ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Ս Խ Ե Մ Ա

ԱՐՄԵՆ ՏԵՐ-ՏԱՃԱՏՅԱՆԻՆ ՕՏԱՐՎՈՂ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԽՃՈՒՂՈՒ 33 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ


Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Հավելված N3  
ՀՀ կառավարության 2019 թվականի  
մայիսի 30-ի N 673 - Ա որոշման

«Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2018 թվականի  
մարտի 29-ի N 340-Ա որոշման

Ս Խ Ե Մ Ա

«ԽԱՐԻՍԽ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՐԱՄԻՆ ՕՏԱՐՎՈՂ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄՈՆԹԵՄԵԼՔՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԱՎԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ